14.qxd 09/07/2025 17:13 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇԱՐԺՈՒՄ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 10 հուլիսի 2025թ. թիվ 14 (618)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈԶԸ

2025 թվականի հունիսի 23-ին Գեղարքունիքի մարզում ամառային զորակոչի մեկնարկը տրվել է Մարտունի եւ Վարդենիս համայնքներում: Հետագա մի քանի օրերի ընթացքում Հայոց բանակ են ճանապարհվել նաեւ Սեւան, Գավառ եւ Ճամբարակ համայնքների նորակոչիկները:

Նորակոչիկներին բանակ ճանապարհելու արարողություններին մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Ջանիկ Բազեյանը եւ Վահան Զարոյանը, մարզի համայնքների ղեկավարները եւ աշխատակիցները, ուժային կառույցների ներկայացուցիչներ, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի անդամներ, նորակոչիկների ծնողներ եւ հարազատներ:

Հունիսի 27-ին Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզի զորակոչային հանձնաժողովի նախագահ Կարեն Սարգսյանն անցկացրել է մարզային զորակոչային հանձնաժողովի հերթական նիստը, որին մասնակցել են զորակոչային հանձնաժողովի բոլոր անդամները:

Օրակարգում քննարկվել են ամառային զորակոչի ընթացքին վերաբերող հարցեր, որից հետո ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման կողմից ներկայացվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում եւ քոլեջներում սովորող անձանց տարկետմանը վերաբերող հարցեր, որոնց հետ կապված հանձնաժողովը տվել է համապատասխան եզրակացություններ:

Հանձնաժողովը քննարկել է նաեւ զորակոչի աշխատանքներին ներգրավված կազմակերպությունների փոխգործակցության արդյունքները, որոնց վերաբերյալ մարզպետը տվել է համապատասխան հանձնարարականներ:

Նիստի ընթացքում քննարկվել են նաեւ վարժական հավաքներին վերաբերող հարցեր:

Ամառային զորակոչը Գեղարքունիքի մարզում կավարտվի 2025 թվականի հուլիսի վերջին:

ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՁԵՌՆԱՐԿՎՈՒՄ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի համապատասխան հրամանով ստեղծված օպերատիվ աշխատանքային խումբը ուշադրության կենտրոնում է պահում Ճամբարակում պայթյունից հետո առաջացած վնասների վերացման գործընթացը:

2025 թվականի հունիսի 11-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի Տիգրան Մեծ փողոցի 4-րդ շենքում տեղի ունեցած պայթյունի հետեւանքների վերացման աշխատանքները շարունակվում են:

Դեպքից անմիջապես հետո ստեղծվել է օպերատիվ աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկված են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, Ճամբարակի համայնքապետարանի, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, Առողջապահության նախարարության, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, ՄՍԾ-ի, ՆԳՆ փրկարար ծառայության եւ Քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչներ:

Միջոցառումների ընթացքն ու արդյունքները քննարկվել են ՀՀ ՏԿԵ նախարարությունում, որտեղ մարզպետ Կարեն Սարգսյանը անցկացրել է աշխատանքային խմբի խորհրդակցություն: Քննարկման ընթացքում ներկայացվել են մինչ օրս իրականացված գործողությունները եւ առկա խնդիրները:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել պայթյունից տուժած բնակիչների սոցիալական աջակցությանը եւ նրանց բնակապահովման հարցերի լուծմանը: Քննարկվել են նաեւ առաջիկա քայլերը՝ ներառյալ տուժածների ժամանակավոր եւ մշտական կացության ապահովման տարբերակները:

Մարզային իշխանությունները եւ ոլորտային գերատեսչությունները շարունակում են համակարգված աշխատանք իրականացնել՝ ապահովելու տուժածների կարիքներն ու բարեկեցությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ՝ ՄԱԿ-Ի ՊՀԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՏՆՕՐԵՆ ՆԱՆՆԱ ՍԿԱՈՒԻՆ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի ղեկավար Նաննա Սկաուին:

Հանդիպման ընթացքում կողմերը բարձր են գնահատել Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի եւ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի միջեւ ձեւավորված արդյունավետ համագործակցությունը՝ հատկապես համայնքների կայուն զարգացման, սննդի ապահովման եւ սոցիալական աջակցության ուղղությամբ իրականացված ծրագրերի շրջանակում:

Կարեն Սարգսյանը Նաննա Սկաուին հանձնել է շնորհակալագիր՝ Գեղարքունիքի մարզում ծավալած ակտիվ գործունեության, արդյունավետ գործընկերային հարաբերությունների եւ կարեւոր ծրագրերի իրագործման համար:

Քննարկման ավարտին Կարեն Սարգսյանը Նաննա Սկաուին մաղթել է հաջողություններ հետագա գործունեության մեջ՝ ընդգծելով, որ մարզպետի աշխատակազմը պատրաստ է պահպանել կառուցողական համագործակցությունը եւ աջակցել ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի թիմի կողմից նախաձեռնված բոլոր ընթացիկ եւ ապագա ծրագրերին:

ՀՈՒԾ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ՎԵՐԻՆ ՎԱՐԴԵՆԻԿԸ

Վերին Վարդենիկ գյուղատեղին, որն անմարդաբնակ է 1949 թվականից, գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղից 3 կիլոմետր հարավ, Վարդենիկ գետի արեւելյան ափի բարձունքում: Այս բնակավայրի մասին հայտնի պատմական տեղեկությունները եւս վերաբերում են վաղ միջնադարին ու ավարտվում 20-րդ դարի երկրորդ կեսի մեկնարկում:

Վերին Վարդենիկի մասին հիշատակություն կա Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Սիսական աշխարհի» գրքում, ուր գյուղը նշված է Տաթեւի վանքին հարկատու բնակավայրերի ցանկում: Բնակավայրի տարածքում պահպանված հուշարձանները փաստում են, որ այն գործել է 7-րդ դարից՝ հաշվի առնելով Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսարեւելյան կողմում ընկած քառակող կոթողի փաստը: Սակայն չի բացառվում, որ այստեղ կարող ենք գործ ունենալ շատ ավելի հին ժամանակաշրջանի հետ, ինչպես որ Գեղարքունիքի մարզի մյուս բնակավայրերի պարագայում է:

Վերին Վարդենիկի կենսագործունեության մասին 1910-ական թվականներին կարճ հիշատակություն է թողել անվանի հնագետ Երվանդ Լալայանը:

«Վերին Գյոզալդարան գտնվում է Ներքին Գյոզալդարայից փոքր-ինչ վերեւ, նույն գետի ձախ ափին: Հիմնված է 1878 թվականին, Ալաշկերտի Քոռուն եւ Մուսուն գյուղերի հայ գաղթականներից: Գյուղում ուշադրության արժանի առանձին բան չկա: Բնակիչները 44 տուն են, 178 արական, 177 իգական, 355 հոգի: Պարապմունքը երկրագործությունն ու անասնապահությունն են»:

Այս վկայությունն էլ մեզ հիմք է տալիս կարծելու, որ Երվանդ Լալայանը Վերին Վարդենիկ չի այցելել անձամբ, այլ բնակչության մասին տեղեկատվությունը փոխանցել է այլ աղբյուրներից, քանի որ դժվար է պատկերացնել, թե նման ականավոր հնագետն ինչպես կարող էր չնկատել Վերին Վարդենիկի Սուրբ Գրիգոր միանավ բազիլիկ եկեղեցին, նրա շրջակայքի բարձրարվեստ քանդակներ կրող խաչքար-տապանաքարերը, քարայր-ճգնարանի ժայռին քանդակված խաչերը: Մինչդեռ այս բնակավայրի հնագիտական արժեքների մասին ոչ միայն «ուշադրության արժանի բան կա», այլ նաեւ հսկայական ու ծանրակշիռ ասելիք կա:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

14.qxd 09/07/2025 17:13 Page 2

ՍԵՎԱՆՈՒՄ ՄԱԿ-Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ Է ԲԱՑՎԵԼ

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը Սեւանում նոր գրասենյակ է բացել՝ Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզերում իր գործունեությունն ընդլայնելու նպատակով:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի նոր գրասենյակի բացմանը մասնակցել են ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի տնօրեն Նաննա Սկաուն, Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Վահան Զարոյանը եւ Զանիկ Բազեյանը, Սեւան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Մարգարյանը, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի եւ Սեւանի համայնքապետարանի պատասխանատու աշխատակիցներ:

-Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզերում մեծ ներուժ կա, եւ մենք ցանկանում ենք զարգացնել գյուղատնտեսական ենթակառուցվածքները եւ լրացուցիչ հնարավորություններ ստեղծել մարդկանց համար: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը արդյունավետորեն համագործակցում է Հայաստանի կառավարության հետ եւ ներգրավելով համայնքների անդամներին՝ խթանում կայունությունը տարածաշրջանում՝ բացահայտելով եւ լուծելով մարզերում առկա մարտահրավերները,-ասել է Նաննա Սկաուն:

-Մարզպետ Կարեն Սարգսյանի եւ մեր անունից թույլ տվեք շնորհավորել բոլորիս Սեւան քաղաքում ՊՀՕ-ի նոր գրասենյակ բացելու կապակցությամբ եւ շնորհակալություն հայտնել ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրին մինչ օրս Գեղարքունիքի մարզում իրականացրած կարեւոր ծրագրերի համար: Այս գրասենյակի առկայությունը կբարձրացնի մարզի փոքր եւ միջին գյուղացիական տնտեսությունների արտադրողականությունն ու շահութաբերությունը,- նշել է Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը:

Սեւան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Մարգարյանը նույնպես շնորհակալություն է հայտնել Նաննա Սկաուին եւ ծրագրի պատասխանատուներին՝ Սեւանում նոր գրասենյակի բացման առթիվ:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը Գեղարքունիքում, ի թիվս այլ ծրագրերի, իրականացնում է «Դպրոցական սնունդ» ծրագիրը՝ ապահովելով տարրական դասարանների երեխաներին տաք եւ սննդարար կերակուրներով:

ՊՀՕ-ն նաեւ իրականացնում է դպրոցական գյուղատնտեսական ծրագրեր ամբողջ Հայաստանում, այդ թվում՝ Գեղարքունիքում, որտեղ դպրոցներին աջակցություն է ցուցաբերվում ջերմատների, ինտենսիվ այգիների եւ արեւային կայանների կառուցման տեսքով:

Արմինե Ղուկասյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԲԻՈԲՐԻԿԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից տրամադրված միջոցների հաշվին գործարկվել է բիոբրիկետի պատրաստման արտադրամաս՝ Գեղարքունիքի մարզում ապաստանած փախստականների եւ սոցիալապես անապահով խմբերի ջեռուցման կարիքները ձմռան ամիսներին հոգալու նպատակով:

Բիոբրիկետի պատրաստման արտադրամասի բացման արարողությանը մասնակցել են ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի տնօրեն Նաննա Սկաուն, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի պատասխանատուներ, Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Զանիկ Բազեյանը եւ Վահան Զարոյանը, Մարտունի համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Շահինյանը, Ներքին Գետաշենի վարչական ղեկավար Ռուբեն Զուլոյանը:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Վահան Առաքելյանի հավաստմամբ՝ արտադրամասն ունի ժամում 250 կիլոգրամ թողունակություն: Բիոբրիկետի արտադրության համար հումք են ծառայելու փայտի ու կահույքի արտադրության, ինչպես նաեւ անտառային թափոնները: Ծրագրի մեկնարկը տրվել է մեկ տարի առաջ:

Բիոբրիկետի արտադրության ծախսերի կրճատման նպատակով ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից արտադրամասի տանիքին տեղադրվել է 50 կիլովատտ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայան: Բացի այդ, ծրագրով նախատեսված է Գեղարքունիքի մարզի համայնքներում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից կառուցված արեւային ֆոտովոլտային կայանների արտադրանքի 30 տոկոսն ուղղել նորաստեղծ հիմնադրամին՝ մարզում ապաստանած փախստականներին ու անապահով խմբերին տրամադրվող վառելիքի արժեքը սուբսիդավորելու նպատակով:

Բիոբրիկետի պատրաստման արտադրամասի գործարկմամբ ստեղծվել է 4 աշխատատեղ:



«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՇԱՏՐՎԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿՇԱՀԱԳՈՐԾՎԻ ԱՅՍ ՏԱՐՎԱ ԱՇՆԱՆԸ

Գավառ քաղաքի շատրվանային համակարգի շինարարությունը, որի մեկնարկը տրվել է 2024 թվականի նոյեմբերին, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, շահագործման կհանձնվի 2025 թվականի աշնանը:

Գավառի շատրվանային համակարգի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 278 միլիոն դրամ, որի 55 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 45 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ շինարարությունն այստեղ ավարտված է շուրջ 620 տոկոսով:

Շինարարական աշխատաքների ղեկավար Նարեկ Թարվերդյանի հավաստմամբ՝ այս պահի դրությամբ կատարվել է ջրավազանի ֆիլտրացիոն եւ սեզոնային դատարկման խողովակների մոնտաժ: Կատարվել է նաեւ տեխնիկական սենյակի կառուցում, որը պահին գտնվում է հարդարման փուլում: Վերանորոգվում է ապամոնտաժված ջրահավաք ավազանի բազալտե սալերի երեսպատումը: Բուն շատրվանային համակարգը ձեռք էր բերվել դեռ 2021 թվականին: Դրա կարգաբերումն ու փորձարկումը նախատեսվում է հուլիսի սկզբին: Շատրվանն իր ընդհանուր մակերեսով Հայաստանում ամենամեծերից մեկն է՝ հագեցած արդի տեխնոլոգիաներով: Շատրվանային համակարգի մակերեսը 576 քառակուսի մակերես ունի, որը լինելու է թե՛ գունավոր, թե՛ երաժշտությամբ, թե՛ տեսաձայնագրմամբ: Ջրի ամենաբարձր շիթի երկարությունը 10-12 մետր է լինելու:

Ըստ Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանի՝ տարածքում տեղադրվելու են լուսաձայնային համակարգեր, իսկ ընդհանուր շատրվանային համակարգն իր լուծումներով, իր ձայնային, լուսային գեղեցիկ համակարգով լրացնելու է Գավառի կենտրոնական հրապարակի ճարտարապետական տեսքը: Շինարարության ավարտին կենտրոնական հրապարակի տարածքը նաեւ կկանաչապատվի եւ կկահավորվի:

Անահիտ Կարեյան

ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԼՈՂԱՓՆՅԱ ՀԱՆԳՍՏԻ ՍԵԶՈՆԸ

2025 թվականի հուլիսի 1-ից «Սեւան Ազգային պարկ»-ի տարածքում գտնվող 5 հանրային լողափերում պաշտոնապես տրվել է լողափնյա սեզոնի մեկնարկը:

Ինչպես տեղեկացրեց «Սեւան Ազգային պարկ» ՊՈԱԿ տնօրեն Կարեն Մնացականյանը, հանրային լողափերում մուտքն անվճար է: Այդ լողափերում գործում են անվճար խաղահրապարակ, հանդերձարաններ, շվաքարաններ, ցնցուղարաններ:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար յուրաքանչյուր լողափում հասանելի է առնվազն մեկ հատուկ ռեզինե անվասայլակ, որը թույլ է տալիս՝ շարժվել ինչպես ավազի, այնպես էլ ջրի մակերեսով:

Լողափերում գործում են՝ ջրափրկարարական ծառայություն, բուժկետեր, հասարակական կարգի վերահսկողություն, որն իրականացնում են էկոպարեկային եւ Ջրային պարեկային ծառայությունները:

Լողափերից երկուսը գործում են Սեւան քաղաքի, երրորդը՝ Սեւանի թերակղզու տարածքներում: Չորրորդ լողափը գործում է Դրախտիկի հատվածում, իսկ հինգերորդ լողափը կբացվի առաջիկա օրերի ընթացքում, Լճաշենի հատվածում:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻՆ ԾՆՎԵԼ Է 70 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի բուժհաստատություններում 2025 թվականի հունիսին ծնվել է 70 երեխա՝ 36 աղջիկ, 34 տղա:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչության տեղեկացմամբ՝ 23-ական ծնունդ գրանցվել է Մարտունու ծննդատանը եւ Սեւանի բժշկական կենտրոնում, 14-ը՝ Գավառի, 8-ը՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում: Ճամբարակի առողջության կենտրոնում հունիս ամսին ծնունդ չի գրանցվել: Իսկ ահա Սեւանի բժշկական կենտրոնում գրանցված 23 ծնունդներից երկուսը զույգ են եղել:

2024 թվականի հունիսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում լույս աշխարհ են եկել 99 երեխա՝ 55 տղա, 44 աղջիկ:

14.qxd 09/07/2025 17:13 Page 3

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՆ ՆԿԱՏՎԵԼ

Գավառ քաղաքի արեւելյան կողմում, Մանուչարի դաշտ կոչվող տարածքում, Գավառ-Մարտունի նախկին ավտոճանապարհի կողքերին Գավառ քաղաքի բնակիչ, հնասեր Թաթուլ Տոնոյանի ուղեկցությամբ, նկատել եւ լուսանկարել ենք պատմամշակութային արժեք ներկայացնող 3 կոթող՝ մեկ մենհիր ու գեղաքանդակ երկու խաչքար:

Մենհիրը գտնվում է Գավառ-Մարտունի նախկին ավտոճանապարհի 7-8 -րդ կիլոմետրի հարավային կողմում, մոտ հարյուր մետր հեռավորությամբ, Կարմիրգյուղի վարչական տարածքում: Այն ունի շուրջ երկու մետր բարձրություն, ներքեւի մասում՝ մոտ մեկուկես մետր լայնություն: Մեկ մետր բարձրությունից հետո հուշարձանը որոշակիորեն նեղանում է՝ նմանվելով խաչի:

Մենհիրները պաշտամունքային հսկայական քարե կոթողներ են, որոնք հեռավոր ժամանակներում կանգնեցվել են նախնյաց գերեզմանների կամ դամբարանների վրա:

Գտնված խաչքարերից առաջինը նկատվեց մենհիրից մի քանի հարյուր մետր դեպի հյուսիս, Գավառ-Մարտունի նախկին ավտոճանապարհի հյուսիսային կողմում:

Խաչքարը, որն իր պատրաստման ոճով նման է 9-10-րդ դարերի խաչքարերին, ունի շուրջ մեկ մետր բարձրություն, վերեւի մասում շրջանաձեւ կտրվածքով, ու կես մետր լայնություն: Այն ներքեւի մասում թաղված է հողի հաստ շերտի տակ: Վերին մասի քանդակների երկու կողմերում գիր է նկատվում, որը դժվարընթեռնելի է մամռակալման պատճառով:

Խաչքարերից երկրորդը գտնվում էր առաջին խաչքարից մոտ երկու հարյուր մետր դեպի հյուսիս, դարձյալ դաշտամիջյան ճանապարհի ուղիղ եզրին:

Նրա վերին մասը թեեւ կոտրված է ու բացակայում է տեղում, սակայն պահպանված մասն էլ չափազանց շքեղ է: Այն եւս իր պատրաստման ոճով նման է 9-10-րդ դարերի քանդակներին:

Հետաքրքիր է, որ երկու խաչքարերի շրջակայքում էլ գերեզմանի կամ գարեզմանոցի հետքեր չնկատվեցին, ինչից կարելիէ ենթադրել, որ այս խաչքարերն անմարդաբնակ այս տարածքում գուցե ծառայել են ճանապարհային ուղեցույցներ կամ սահմանախաչեր: Հաջորդ ենթադրությունն այն է, որ դրանք գուցե հողի տակից դուրս բերված լինեն մելիորատիվ աշխատանքների ընթացքում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության պետ Գոռ Գասպարյանի հավաստմամբ՝ նկատված մենհիրն ու երկու խաչքարերը ներառված չեն պետական պահպանության ցանկում:

-Մանուչարի դաշտում, որտեղից գտնվել են ձեր մատնաշած կոթողները, բազմաթիվ են են պատմահնագիտական հուշարձանները, որոնք այդպես էլ չեն ներառվել պետական պահպանության ցանկում: Հենց այդ տարածքից է վերջերս գտնվել ցլակերպ վիշապակոթողը ու մեկ խաչքար, որոնք արդեն պետական գրանցման փուլում են գտնվում,- ներկայացրեց Գոռ Գասպարյանը:

Խոսրով Խլղաթյան

ԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ «ՎԱՆՔ» ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱԾՔԸ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք գյուղի «Վանք» կոչվող եկեղեցին, իր տարածքով, համարվում է Գեղարքունիքի մարզի համամատաբար քիչ ուսումնասիրված պատմամշակութային հուշարձաններից մեկը, թեեւ այն ընդգրկված է հուշարձանների պահպանության պետական ցանկում ու համարվում է մեր թվարկության 7-րդ դարի կառույց:

Դրա համար, անշուշտ, հիմք է ընդունվել եկեղեցու մուքից դեպի արեւելք ընկած քառակող կոթողի մի բեկոր, որն իր կերտման ոճով նման է 7-րդ դարի եկեղեցաշինական կառույցների ճարտարապետական տարրերին: Ամեն դեպքում, քառակող, հղկված այս կոթողը եւ եկեղեցու մուտքի դիմաց գտնվող կլոր շարվածքի մեջ բացված փոսում ընկած պատվանդանը պարզորոշ հուշում են, որ այստեղ, Ակունք գյուղից շուրջ 6 կլիոմետր հեռավորությամբ ու ծովի մակերեւույթից 2600 մետր բարձրությամբ առնվազն 7-րդ դարում կամ վաղ միջնադարում գործել է պատմաճարտարապետական հոգեւոր քանդակազարդ կառույց, որից մեր օրերում ընդամենը պահպանված է երկու բեկոր: Եկեղեցու պատերը, որի տաշած քարերը շարված են գրեթե առանց շաղախի, հիշեցնում են ուշ միջնադարյան ճարտարապետությունը, իսկ եկեղեցու խորանի դիմաց գտնվող գեղաքանդակ խաչքարը պատկանում է 13-դարի քանդակների ոճին:

Դժվար է ասել, թե ուր են անհետացել 7-րդ դարի կառույց համարվող շինության մյուս բեկորները, որոնք ժամանակին կազմել են մի շքեղ ամբողջություն, սակայն չի բացառվում ,որ դրանք թաղված լինեն հողի շերտի տակ, հենց եկեղեցու շրջակայքում, որտեղ նկատելի են նաեւ մի քանի հնագույն, բրոնզեդարյան դամբարանային շարվածքներ, որոնք գտնվում են քանդված ու տակնուվրա արված վիճակում:

Եվ այդ դամբարանների գոյությունը միանգամայն հիմք է տալիս՝ եզրակացնելու, որ այս սրբավայրը գործել սկսել է շատ ավելի վաղ ժամանակներից, նույնիսկ՝ 7-րդ դարից հազար ու ավելի տարիներ առաջ:

Ակունք գյուղի բնակիչ, Ակունք համայնքի նախկին ղեկավար Արծրուն Ղարիբյանի ներկայացմամբ՝ այս սրբավայրը, ըստ ավանդության, հին դարերում եղել է հեթանոսական մեհյան, որտեղ շրջակա յոթ բնակավայրերի բնակիչների համար բորբոք է մնացել կրակապաշտական ատրուշանը:

-Այսօրվա Ակունքի վարչական տարածքում կան յոթ գյուղատեղիների ավերակներ, ու այդ գյուղերը, ըստ հնագիտական ուսումնասիրությունների, գործել են հազարամյակներ շարունակ: Մեզ հասած ավանդազրույցների համաձայն՝ այս բարձունքի վրա գտնվող մեհյանը հսկել է ողջ տարածքի բնակավայրերը, այստեղ մշտաբորբոք ատրուշանի առաջ պաշտամունքի են եկել մեր հեթանոս նախնիները: Մեր ժամանակներում ու մեզանից առաջ էլ այս վայրը եղել է ձգող սրբավայր-ուխտատեղի, որը կանչում է նաեւ նոր սերունդներին,-պատմեց Արծրուն Ղարիբյանը:

Ակունքի «Վանք» եկեղեցին, բացի ուխտավայր լինելուց, մի բացառիկ դիտակետ ու պահակետ է տարածքի բնակավայրերի, բերդ-ամրոցների համար: Երկնամերձ ու գեղատեսիլ այդ բարձունքից, ինչպես ափիդ մեջ, բոլորեքյան երեւում են Վարդենիսի, Արեւելյան Սեւանի, Սեւանի, Արեգունու, Գեղամա լեռնաշթաները, մարզի արեւելյան հատվածի բնակավայրերը, ճանապարհները:

«Վանք» եկեղեցու մուտքից արեւմուտք գտնվող պատի ներքեւի հատված երկու անկյունաքարերի վրա նկատվեց անվարժ ձեռագրով խազված գիր՝ նույն բովանդակությամբ: Երկու դեպքում էլ, լուսանկարը խոշորացնելուց հետո, ստացվեց «Ամենափրկիչ» բառը:

Դժվար է ասել, թե երբ եւ ում կողմից է այն գրվել, սակայն կարել է ենթադրել, որ այս տարածքում ապրող մարդկանց հիշողության մեջ այս սրբավայրը տպավորվել է նաեւ «Ամենափրկիչ» անունով:

«Վանք» եկեղեցու մուտքի կողմից տեղադրվել է 2016 թվականի Արցախյան քառօրյա պատերազմում Թալիշում զոհված հայորդիների հուշախաչքարը եւ 44-օրյա պատերազմում զոհված հերոսներին նվիրված մետաղակուռ խաչը, որն ունի 12 մետր բարձրություն եւ կառուցվել է ակունքցի բարերար Արմեն Ավագյանի միջոցներով:

«Վանքի» բարձունքը հյուսիսային կողմում ստիճանաբար ցածրանում է ու ավարտվում փոքրիկ ձորակի մոտ, որից այն կողմ արդեն տարածվող բարձրավանդակի վրա հեռվից նկատելի են պարիսպների ու բնակատեղիի հետքեր: Չի բացառվում, որ ուսումնասիրության դեպքում այստեղ ի հայտ գան հնագիտական նոր արժեքներ:

Իսկ «Վանք» եկեղեցու ստույգ ժամանակագրությունը հստակեցնելու ու պատմությունն ամբողջացնելու համար հարկ կլինի այստեղ իրականացնել հնագիտական պեղումներ:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՊԱՐԱԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԶԵՄՊԻՈՆ ԱՐՏՅՈՄ ՄՈՒԽՍՅԱՆԻՆ

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանն ընդունել եւ պարգեւատրել է Գավառի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցի մարզիկ, պարածանրամարտի աշխարհի գավաթի 2025 թվականի առաջնության ոսկե մեդալակիր Արտյոմ Մուխսյանին եւ նրա մարզիչ Ժորա Հովհաննիսյանին:

Արտյոմ Մուխսյանը, ով դեռ սովորում է Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում, այս տարվա մայիս ամսին Հայաստանի պարածանրամարտի հավաքականի կազմում մասնակցել է Թբիլիսիում կայացած աշխարհի գավաթի 2025 թվականի առաջնությանը եւ նվաճել 2 ոսկե մեդալ:

Համայնքի ղեկավարը շնորհավորել է մարզիկին եւ նրա մարզչին, հետագա հաջողություններ ցանկացել եւ նրանց պարգեւատրել պատվոգրերով եւ դրամական պարգեւներով:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՈՌՈԳՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տնտեսություններում արդեն տրվել է ոռոգման շրջանի մեկնարկը:

Ինչպես տեղեկացրեց «Գեղարքունիք» ՋՕԸ տնօրեն Արտաշ Սարդարյանը, այժմ ոռոգման շրջանը մասամբ սկսված է նաեւ Վարդենիսում, իսկ առաջիկայում այն կմեկնարկի նաեւ Գավառ համայնքի տնտեսություններում:

-Նախապատրաստական աշխատանքները «Գեղարքունիք» ՋՕԸ-ում գրեթե ամբողջությամբ ավարտված են: Պատրաստի վիճակում են գտնվում բոլոր պոմպակայանները, խորքային հորերը, ջրամատակարարման ինքնահոս համակարգերը: Ոռոգման շրջանի մեկնարկին զուգահեռ ակտիվորեն ընթանում են հայտերի հավաքագրման աշխատանքները: «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի շրջանակներում շուրջ 70 տոկոսով իրականացված է «Մանասի առու» ոռոգման ինքնահոս ջրատարի հիմնանորոգումը, որի պայմանագրային արժեքը կազմում է 319,4 միլիոն դրամ: Իսկ նույն ծրագրի շրջանակներում արդեն ավարտվել է Լանջաղբյուրի ջրամբարի մոտեցնող ջրանցքի կառուցումը պոլիէթիլենային փակ խողովակաշարով, 2650 մետր երկարությամբ, ինչի արդյունքում այն արդեն սնում է Լանջաղբյուրի ջրամբարը: Առաջիկա օրերին Վարդենիս համայնքի Ծովակ գյուղում կշահագործվի արդի չափորոշիչների համապատասխան ոռոգման նոր համակարգ, որը կառուցվել է «ՄԱՋԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի» շրջանակներում, Վարդենիսի համայնքապետարանի եւ «Գեղարքունիք» ՋՕԸ համագործակցությամբ, ինչի արդյունքում ոռոգելի կդառնա շուրջ 250 հեկտար հողատարածք: Իսկ համայնքներում նախորդ տարում սուբվենցիոն ծրագրերով կառուցված ոռոգման համակարգերի շնորհիվ ջուրը տնտեսություններին կմատակարարվի ժամանակին ու անկորուստ: Մեր կողմից արվում է հնարավորը, որպեսզի ոռոգման ջուրը մեր բաժանորդներին մատակարարվի ժամանակին ու անխափան: Մատակարված ոռոգման ջրի դիմաց նախորդ տարվա վարձավճարները գանձվել են 108 տոկոսով,- նշեց Արտաշ Սարդարյանը:

14.qxd 09/07/2025 17:13 Page 4

ՀՈՒՇ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ՎԵՐԻՆ ՎԱՐԴԵՆԻԿԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Վերին Վարդենիկի մասին հաջորդ հիշատակությունը թողել է անվանի հնագետ Սեդրակ Բարխուդարյանը: «Վերին Վարդենիկը գտնվում է Վարդենիկ գյուղից 3 կիլոմետր հարավ, գետակի ափին: Սուրբ Գրիգոր եկեղեցին շինված է մեծ եւ ճեղքված քարերով: Երեք մետր երկարություն ունեցող նեղ դահլիճի կենտրոնում դրված են միակտուր եւ ներքեւից վերեւ լայնացող քարե սյուներ, որոնց վրա, նույնպես միակտուր քարից հեծաններ, ապա ծածկված են մեծ, կիսատաշ քարերով: Եկեղեցու հարավային մուտքի առաջ եղել է փոքր գավիթ, որի հիմնապատերն են մնում: Շինության ժամանակը որոշ չէ: Ներքուստ երեսպատման քարերի վրա եղած հնագույն արձանագրությունը վերաբերում է 1291 թվականին: Սուրբ Գրիգորի շուրջը տարածված գերեզմանատանը կան գերեզմանաքարեր, որոնցից հնագույն տապանագիր արձանագրությունը գրվել է 1691 թվականին»:

Ըստ Բարխուդարյանի կողմից կատարված վերծանումների՝ Սուրբ Գրիգոր եկեղեցու բեմի հյուսիսային կողմում, երեսով արեւմուտք, խաչերի արանքում արձանագրված է 3 տող. «Ողորմին անխափան կատարեց ԹՎ. ՉԽ/ 1291/:

Եկեղեցու բեմի հարավային կողմում, երեսով արեւմուտք, խաչերի շուրջը, արձանագրված է 12 տող. «Ես, աղբ...աբեղա միայբանեցայ սբ. Գրիգորիս եւ վանակայնիս Ջատիկ շաբաթ աւրին Պատարագ ինձ. եյետ ով խափանե, դատի յայ»: Բարխուդարյանը կարծում է, որ այն գրվել է նույն ժամանակում, ինչը նախորդի պարագայում է՝ 13-րդ դարում:

Վանքի հարավային պատի տակ, գավթի ավերակների մեջ, կա մեծ, օրորոցաձեւ տապանաքար, որն ունի հետեւյալ արձանագրությունը. «Ես Զոսիմոս քահանայ եւ ամուսին իմ փոխեցաք ի մահվանե ի կեանս եւ զծնողն մեր զվանական եւ զմայրն իմոյ յիշեցեք ի Քրիստոս ԹՎ. ՉԽԵ/1296/:

Եկեղեցու գավթի արեւելյան պատի մեջ ագուցված խաչքարին հետեւյալ բովանդակության արձանագրությունն է. «Ես Խոճայդեղս կանկնեցի զխաչս ի փրկություն հոգվոյ որդվոյ իմոյ Ամիրին ԹՎ. Ջ/1451/:

Գավթի արեւելյան պատի մեջ ագուցված մեկ այլ խաչքարին արձանագրված է. «Կանկնեցի Ջխաչս փրկութիւն հոգվոյն հաւրն իմ Խոճայդեղին ԹՎ. Ջ/ 1451:

Անթվակիր մի խաչքարի էլ արձանագրված է. «Խաչս բարեխոս Մխիթարին եւ կողակցին»:

Վերին Վարդենիկի գերեզմանատանը, որը գտնվում է եկեղեցու հարավային ու հյուսիսային կողմերում, պահպանվել են Աղսուլթանի, Նազարի, Արզունքանի, Միրզախանի, Ճանղուլի եւ Հախնազարի արձանագիր ու պատկերազարդ տապանաքարերը, որոնցից ամենահինը վերաբերում է 1693, ամենանորը՝ 1711 թվականին:

Դժվար է ասել, թե այդուհետ ինչ է կատարվել այս գյուղի հետ, ինչ աղետի պատճառով է գյուղը դարձել անմարդաբնակ: Ամենայն հավանականությամբ, Սյունիքում ու Արցախում 1722-1730 թվականներին բռնկված ազգային ազատագրական շարժումների պարտությունից ու մահմեդական ցեղերի դաժան ու չընդմիջվող ասպատակությունների արդյունքում է լքվել բնակավայրը, որտեղ կյանքը վերակենդանացել է 1878 թվականից, երբ այստեղ ռուս-թուրքական հերթական պատերազմից ու Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքումից հետո վերաբնակություն են հաստատել արեւմտահայ 44 ընտանիքներ, որոնց թիվը 1949 թվականին, բնակիչների՝ այլ բնակավայր տեղափոխելու պահին, հասել է շուրջ 120 տնտեսության:

Վերին Վարդենիկի Սուրբ Գրիգոր եկեղեցու ճարտարապետական բացառիկ ոճին ժամանակին անդրադարձել է հայ անվանի հնագետ-ճարտարապետ Ստեփան Մնացականյանը՝ իր «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» գրքում մանրամասնորեն տալով այս հուշարձանի չափազանց արժեքավոր ու կարեւոր նկարագիրը: Մանրամասնորեն քննելով ու վերլուծելով Սյունիքի պատմաճարտարապետական հուշարձանների կառուցվածքային ու շինարարական առանձնահատկությունները՝ Ստեփան Մնացականյանը դրանցից առանձնացնում է երկուսը, որոնք իրենց ճարտարապետական մտահղացմամբ ու կառուցողական տեխնիկայով բացառիկ են ու մյուսներից տարբերվող:

«Դրանցից առաջինը գտնվում է Մարտունու շրջանի Վերին Գյոզալդարա գյուղում: Հուշարձանն ըստ իր հակատագծային կոմպոզիցիայի մի ուղղանկյուն, արեւմուտքից արեւելք ձգված կառուցվածք է՝ նրա կենտրոնում դասավորված երեք ուժեղ սյուներով:

Այստեղ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հատակագծային կոմպոզիցիան, որը եզակի երեւույթ է հայկական ճարտարապետության մեջ, այլեւ կառուցողական այն տեխնիկան եւ հատկապես քարային ծածկի այն կոնստրուկցիաները, որոնք օգտագործվել են այստեղ, եւ որոնք այնքան անսովոր են հայկական մոնումենտալ ճարտարապետության համար առհասարակ:

Դահլիճի կենտրոնում, աստիճանավոր խարսխի վրա բարձրանում են հաստահեղույս, կիսամաքուր մշակված, միակտուր բազալտե 0,5*0,6 մետր կտրվածք եւ 2,80 մետր բարձրություն ունեցող սյուներ, որոնց վրա ընդլայնական ուղղությամբ հենվում են դարձյալ միակտուր 0,5*0,7 մետր կտրվածք եւ 3,90*4,10 մետր երկարություն ունեցող ուժեղ հեծաններ: Ահա այս հեծանների վրա էլ իրենց հերթին հենվում են 0,8*09 մետր լայնության, 0,20-025 մետր հաստության եւ 2-2,20 մետր երկարություն ունեցող ծածկի սալերը:

Յուրահատուկ ձեւ ունեն սյուները, որոնք աստիճանաբար լայնանում են դեպի վեր, ճիշտ այնպես, ինչպես տեսնում ենք ժողովրդական ճարտարապետության մեջ, գլխատան հազարաշեն ծածկը կրող հիմնական սյուների ձեւերում:

Միակտուր սյուներն իրենց հերթին հենվում են աստիճանաձեւ խարիսխների վրա, որոնք բաղկացած են դարձյալ երկու, դարձյալ միակտուր բազալտե սալերից: Ընդ որում, ներքին սալն անհամեմատ ավելի մեծ է, քան վերինը: Եկեղեցու աբսիդը նույնպես կառուցված է կոպիտ մշակված բազալտից եւ իր ընդհանուր ձեւով մոտենում է կիսաշրջանագծին: Աբսիդի՝ դեպի արեւմուտք նայող անկյունները ձեւավորված են երկու հաստահեղույս միակտուր սյունանման քարերով, որոնց վերեւի մասերը կորագիծ տաշվածք ունեն եւ կարծես հիշեցնում են աբսիդի կամարի հիմքերը: Այս մոնոլիտների վրա հենվում է հորիզոնական մեկ այլ քարե հեծան, որն իր հերթին հենարան է ծառայում աբսիդը ծածկող սալերի համար:

Հուշարձանը համարյա թե զուրկ է դեկորատիվ հարդարանքից, եթե չհաշվենք աբսիդի երկու կողմերում կանգնեցված մոնոլիտների վրա փորագրված խաչերը: Այստեղ եւս առկա է 17-րդ դարի մի արձանագրություն:

Հուշարձանն արտաքինից համարյա թե խրված է բլրալանջի մեջ եւ միայն արեւմուտքից ու հարավից է, որ կարելի է տեսնել ճեղքված քարից շարված նրա ոչ բարձր պատերը:

Ի հակադրություն այդպիսի անշուք էքստերյերի, հուշարձանի ինտերյերը՝ նրա ուժեղ եւ հզոր մոնոլիտ սյուներով, նրանց վրա հենվող հսկայածավալ քարե հեծաններով եւ կառուցվածքի կազմը ծածկող մեծադիր սալերով արտակարգ տպավորություն է թողնում:

Դժբախտաբար, ոչինչ հայտնի չէ այս կառույցի թվագրման մասին: Սակայն այն հանգամանքը, որ պատերի շինարարական տեխնիկան ամբողջությամբ կրկնում է 9-րդ դարի վերջին եւ 10-րդ դարի սկզբին Սյունիքում այնքան տարածված կառուցողական տեխնիկան, որոշ հիմքեր է տալիս՝ այս հուշարձանը թվագրել հենց այդ ժամանակով:

Մյուս հուշարձանը, որ խիստ կերպով անջատվում է վերը բերված թաղածածկ կառուցվածքների ոճական այնքան միասնական խմբից, դա Տաթեւի վանքից ոչ հեռու գտնվող Բղենու Նորավանքի գլխավոր եկեղեցին է»,- գրում է Ստեփան Մնացականյանը:

Իրոք, արտասովոր տպավորություն են գործում եկեղեցու քարե հեծաններն ու ծածկի սալերը պահող քարեղեն սյուները ու հատկապես՝ նրանց վրա քանդակված խաչերը: Անգամ տպավորություն է առաջանանում, թե այդ սյուները նախապես եղել են հեթանոսական դարաշրջանին բնորոշ վիշապակոթողներ:

Ամենայն հավանականությամբ, եկեղեցու արտաքին պատերը շարվել են ավելի ուշ ժամանակներում, 1878 թվականին գյուղը վերաբնակեցրած հայ գաղթականների կողմից, քանի որ նման կառույցի հզոր կմախքի պատերը դժվար թե լինեին այսքան անշուք շարվածքով, առանց ցերեկային լուսավորության հնարավորության: Չի բացառվում նաեւ, որ կառույը մեզ հասած լինի նախաքրիստոնեական շրջանից, իսկ սյուների վրայի խաչքանդակներն արված լինեն հետագա ժամանակներում:

Այս ենթադրությունն առարկայանում նաեւ այն փաստով, որ 1990-ական թվականներին հայ-իտալական հնագիտական միացյալ աավախմբի կողմից կատարված ուսումնասիրության ժամանակ Վերին Վարդենիկ գյուղի տարածքից հայտնաբերվել է խեցեղեն, որի պատրաստման թվականը համընկնում է Քրիստոսից առաջ 5-րդ դարին:

Եկեղեցու հյուսիսային պատին մոտիկ վերջերս հողի տակից հանվել ու կանգնեցվել է մի գեղաքանդակ արձանագիր խաչքար՝ 1652 թվականով թվագրված: Իսկ եկեղեցու արեւմտյան կողմում, ձորաբերանի բարձունքի ժայռերի վրա խաչեր կան քանդակված: Նույն ժայռերի խոռոչները թողնում են ճգնարանի տպավորություն: Այստեղից բացվում է խորունկ ձորի սքանչելի համայնապատկերը՝ միաձուլված լեռնային գետի անլռելի շառաչին: Դիմացը փռված են Վարդենիսի լեռնաշթայի ձյունոտ, բարձրաբերձ կատարներն ու կանաչառատ լեռնափեշերը, ձորերն ու ձորակները: Այստեղ այցելող մարդն ակամա իրեն զգում է էներգետիկ հզոր դաշտի մեջ, գերող ու հրապուրիչ անկյունում, թեկուզեւ տխրեցնող ու վայրի ամայության մեջ:

Վերին Վարդենիկի նախկին բնակիչների սերունդերն այսօր հիմնականում բնակվում են Արարատի մարզի Ավշար եւ Մարմարաշեն գյուղերում, իսկ չորս գերդաստան՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղում: Նրանց մեջ, վարդենիկցիների իսկ վկայությամբ, շատ խորն են նստած իրենց նախնիների բնակավայրի հանդեպ ունեցած հիշողությունն ու կարոտը:

Նրանցից շատերը հաճախակի են այցելում իրենց նախնիների գերեզմաններին, կարոտն առնում հայրենի բնօրրանից: Բացի այդ, իրենց հոգում ամբարել են հետաքրքիր զրույցներ ու պատմություններ իրենց պապերի կամ հարազատների մասին:

Այսպես, Վերին Վարդենիկի բնակիչ Աղաբեկ Վարդանյանն իր հինգ զավակների ու կնոջ հետ բնակության է տեղափոխվել Արարատի մարզի Ավշար գյուղ: Նրանք Վերին Վարդենիկում ժամանակին զբաղվել են հողագործությամբ ու անասնապահությամբ, ունեցել եկամտաբեր տնտեսություն:

-Պապս միշտ կարոտով էր խոսում Վերին Վարդենիկի եկեղեցու մասին, ասում էր, որ դրա նման հզոր ու կուռ եկեղեցի աշխարհում չկա, հիշում էր, որ գյուղում աղբյուրի ջրերը չեն բավարարել, մարդիկ հիմնականում ջուրը ձեռքով կրել են ձորով հոսող գետից, շատ են կռիվ տվել հողի ու քարի հետ, սակայն դժվար են բաժանվել իրենց հարազատ բնօրրանից, երբ գյուղը կառավարությայն որոշմամբ տեղափոխել են: Իսկ պապիս եղբայրը՝ Արտաշ Վարդանյանը, եղել է Վերին Վարդենիկի դպրոցի տնօրենը: Նա բանակ է զորակոչվել Հայրենական մեծ պատերազմի տարիներին, աչքի ընկել Հունգարիայի տարածքում գերմանաֆաշիստական զորքերի դեմ մղվող մարտերում, ու անձնվեր ծառայության դիմաց անձամբ Ստալինի կողմից պարգեւատրվել Ոսկե գրիչով, ինչի մասին եւ գրվել է խորհրդահայ մամուլում: Ու երբ այդ թերթը գյուղ է հասել, ձեռքեձեռք անցել, մի չկամ ու մատնիչ մարդ զրպարտագիր է ուղարկել վերին ատյաններ՝ պապիս եղբորը բանադրելով ու ներկայացնելով որպես «ժողովրդի թշնամի»: Այդ զրպարտագրի հիման վրա էլ հենց Հունգարիայում, առանց դատ ու դատաստանի, Արտաշին գնդակահարել են: Հետագայում, 1970-ական թվականներին, Արտաշի որդու հասցեով նամակ է ստացվում Հունգարիայից, որով նա հրավեր է ստանում տեղի իշխանությունների կողմից: Պարզվում է, որ այդ քաղաքում Արտաշ Վարդանյանի անունով փողոց է անվանակոչված, որ նա հետմահու արդարացվել է, ու նրա սխրանքները հավուր պատշաճի են գնահատված, -պատմում է Աղաբեկ Վարդանյանի թոռնուհին՝ Մելսիդա Վարդանյանը, ով հասակ է առել Ավշարում, այժմ բնակվում է Երեւանում:

Իսկ Վարդենիկում բնակություն հաստատած Միրզո Մադոյանը մահից առաջ պատգամել է՝ իրեն ամփոփել Վերին Վարդենիկում՝ իր ծնողների կողքին, ու այդ պատգամը կատարվել է:

Մի պահ պատկերացրի, թե որքան հաճելի կլիներ՝ այս չքնաղ բնաշխարհի մեջ տեսնել ոչ թե ամայացած, այլ բարեշեն մի գյուղաշխարհ՝ իր շեն տներով, մարդաշատ փողոցներով, եռուզեռի մեջ գտնվող մաճկալներով ու հովիվներով, անասնահոտերով, փողոցներում կամ հանդերում խաղացող երեխաներով, դպրոցի ու մանկապարտեզի ժամանակակից շենքերով, այլ հրապույրներով: Գուցե թե մի գեղեցիկ օր էլ մի հրաշքով վերածնվեր, վերադառնար այդ աշխարհը:

Խոսրով Խլղաթյան

14.qxd 09/07/2025 17:13 Page 5

ՏԱԹԵՎԻ ՀԶՈՐԱԶՈՐ ՈՒ ԱՌԱՊԵԼԱԿԱՆ ՎԱՆՔԸ

Տաթեւի վանքին մոտենում ենք կեսօրից առաջ՝ ուշիուշով չափելով շրջակայքի լեռներն ու անդնդախոր ձորերը, բնակավայրերը, Որոտան գետի անդադրում հոսքը, օդով մեկ ձգվող, աշխարհի ամենաերկար ճոպանուղին՝ 7,5 կիլոմետր երկարությամբ: Կուսական ու վայրի բնության մեջ, անդունդների գագաթի հարթության վրա բազմած Տաթեւի վանքը չափազանց ու ավելի հմայիչ է թվում իր տեսքի մեջ: Նրա ամրակուռ պարիսպները, աշտարակները, երկնասլաց գմբեթները, տնտեսական շինությունները, կամարներն ու խոյակները, որմնաքանդակները, վիմագիր արձանագրությունները, ճարտարապետական բացառիկ մտահղացումները, որմնանկարների հետքերը պարզորեն հուշում են, որ մեր դեմ վեհորեն ոչ միայն վանք ու սրբավայր է կանգնած, այլ նաեւ հայ ժողովրդի պատմության հազարամյակների առհավատչյա կառույցը, ուր մարդիկ ոչ միայն զբաղված են եղել աղոթքով, այլ նաեւ՝ ազգային արժեքներ կերտելով, ծաղկելով ու գրելով, մաքառելով ու արարելով, Սուրբ հավատը կենսասիրության հետ մեկտեղելով, կրթվելով ու ազգային ոգով դաստիարակվելով: Տաթեւի վանքում ապրել ու գործել, նրա կենսագործունեությանն առնչվել են մեր ժողովրդի լավագույն ու պանծալի զավակները, թագավորներն ու իշխանները, բարձրաստիճան հոգեւորականները, ազգային-ազատագրական պայքարի գործիչները, գրողներն ու մտավորականները, գիտության ու մանկավարժության երեւելի այրերը: Տաթեւի վանքն իր մեջ պարփակում է ավելի քան հազար եւ յոթ հարյուր տարիների պատմություն ու նույնքան էլ չընդմիջվող կենսագրություն, անգամ այն դեպքում, երբ այստեղով պարտադիր անցել են բոլոր աշխարհավեր ու չար նվաճողները:

Տաթեւի վանքը շատ ավելի հռչակավոր է իր դիրքով ու դերով, իր ազգապահպան նշանակությամբ, իր պարգեւած կենսունակությամբ ու հավատի ուժով: Այն պետականության կորստի պայմաններում անգամ հայ մարդու մոտ ընկալվել է որպես հայոց անխաթար պետություն, որպես հույս ու ապավեն: Ու չկա, չի եղել մի հայ մարդ, ում հոգում Տաթեւը եղած չլինի որպես պաշտամունքի խորհրդանիշ:

Տաթեւի համալիրը մեծ տարածություն է գրավում: Տաթեւ եւ Որոտան գետերի կիրճերի միջեւ եռանկյունաձեւ ձգվում է ժայռեղեն մի թերակղզի, որի վրա կառուցված է վանքը: Զառիթափ ժայռերի բարձրությունը հասնում է 700-800 մետրի: Մյուս կողմերից վանքը շրջապատված է աշտարակներով եւ հաստ պարսպապատերով՝ լուսամուտների նեղ բացվածքներով: Համալիրը ներկայացնում են պարսպատերերը, ձիթհանը, սուրբ Պողոս-Պետրոս տաճարը, սուրբ Աստվածածին մատուռ-եկեղեցին, սուրբ Գրիգոր եկեղեցին, սուրբ Գրիգոր Տաթեւացու դամբարանը, «Գավազան» հուշարձանը, սեղանատունը, դասասենյակները, մատենադարանը, ուխտագնացների հյուրատունը, բնակելի տարածքները, խոհանոցը, բազմաթիվ ծառայողական շինությունները եւ վանական խցերը:



Ավանդության համաձայն՝ վանքը կոչվել է Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեոսի անունով: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Տաթեւի վանքի առաջին եկեղեցին կառուցվել է 4-րդ դարում, ունեցել անշուք տեսք, սակավաթիվ ճգնավոր միաբաններ: 8-րդ դարի վերջին եղել է Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը: Այստեղ են բերվել Քրիստոսի խաչափայտի մասունքով արծաթե հսկա՝ մարդաչափ «Բաբկենյան խաչը», որը պատրաստել էր Բաբիկ իշխանի որդի Վասակը, Բյուզանդիայից՝ «Աստվածամուխ սուրբ Նշանը» , սուրբ Հովհաննեսի, սուրբ Ստեփանոս Նախավկայի, տասնմեկ առաքյալների, սուրբ Գրիգոր Լուսավորչի, սուրբ Հռիփսիմեի մասունքները, Աստվածածնի մազերը: Կալվածքներ գնելու եւ նվիրատվությունների շնորհիվ վանքը դարձել է խոշոր ավատատեր: 848 թվականին իշխան Փիլիպե Սյունին կառուցել է սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Սյունյաց գահերեց իշխան Աշոտ Սյունու պատվերով Հովհաննես եպիսկոպոսը ձեռնարկել է հայկական ամենախոշոր եկեղեցիներից մեկի՝ սուրբ Պողոս-Պետրոս տաճարի կառուցումը, ինչին օժանդակել է Շուշանիկ տիկինը: Տաճարի հիմքը դրվել է 895 թվականին, շինարարությունն ավարտվել 906 թվականին: Օծմանը ներկա են եղել Սմբատ Ա թագավորը, Վասպուրականի Գագիկ Արծրունի իշխանը, կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցին, Աղվանից Սիմոն Բ կաթողիկոսը, հոգեւոր ու ազնվական դասի ներկայացուցիչներ: Բացվում նաեւ է Տաթեւի մատենադարանը: Սյունիքի թագավորության (987-1170) անկումից հետո Տաթեւի վանքը որոշ ժամանակով ամայացել է, իսկ հոգեւորականները տեղափոխվել են Նորավանք:

Կարճ ժամանակ անց Սյունիքը, Արցախը, Այրարատը, Ուտիքի ու Գուգարքի մի մասը մտնում են Զաքարյան իշխանապետության կազմի մեջ: Սյունիքի իշխաններ Օրբելյանները խթանում են վանքի հետագա զարգացումը: 14-րդ դարում հիմնադրվում է Տաթեւի համալսարանը, որը դառնում է գիտության խոշոր կենտրոն: Դրան կից բացվում է Տաթեւի մանրանկարչության դպրոցը: Ուշ միջնադարում եւ նոր ժամանակներում Տաթեւի պարսպապատ վանքը ու նրան կից նորաբաց Տաթեւի անապատը ունեցել են կարեւոր ռազմավարական նշանակություն: 1722-30 թվականներին Տաթեւը եղել է Սյունիքի ազատագրական պայքարի, 1919-21 թվականներին՝ Զանգեզուրի ինքնապաշտպանության կարեւոր օջախներից մեկը:

1931 թվականին տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով եկեղեցական համալիրը գրեթե ամբողջությամբ ավերվել է, գետնին է հավասարվել Տաթեւի համալսարանը, հողով ծածկվել վանքի մուտքը: 1974-1998 թվականներին վանական համալիրի մեծ մասը վերականգնվել է. կիսակառույց են շարունակում մնալ զանգակատունը եւ հարակից մի քանի կառույցներ, այդ թվում՝ պարիսպների մի մասը:

Տաթեւի վանքի անվան հետ կապված կա երկու տարբերակ: Դրանցից մեկի համաձայն, «Տաթեւ» անունը ծագում է հայերեն «տա թեւ» արտահայտությունից: Երկրորդ տարբերակի համաձայն՝ վանքը կոչվել է Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեոսի անունով: Նա այս վայրերում տանջամահ է եղել, իսկ 4-րդ դարում իր գերեզմանի վրա կառուցվել է եկեղեցի, որն օծել է սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Բերդի պարիսպների ետեւում պահպանվել են եկեղեցու ավերակները, որոնք հեռու չեն Տաթեւի վանքից:

Տաթեւի վանքը վերստին հզորացել է, երբ 1286 թվականին Կիլիկիայում Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսը Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանին օծել է Սյունյաց աթոռի մետրոպոլիտ եւ հայոց նախաթոռ եպիսկոպոս: Նա միավորել է Սյունյաց տարանջատված եպիսկոպոսարանները, մեկնել Մոնղոլիա՝ Արղունխանի մոտ եւ հաստատել Տաթեւի վանքի գերագահությունը Սյունիքի բոլոր թեմերի նկատմամբ: 1295 թվականին Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանը հիմնովին վերակառուցել է երկրաշարժից ավերված սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին եւ Տաթեւի վանքին նվիրել սեփական Արիտ գյուղը, 1297 թվականին վանքում ավարտել է «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը:

Ավելորդ չէ հիշեցնել, որ այս գրքում չափազանց կարեւոր ու ճշգրիտ տեղեկություններ են պահպանվել Գեղարքունիք աշխարհի բազմաթիվ բնակավայրերի, տեղանունների, իշխանների ու հոգեւորականների, պատմական իրադարձությունների, վանական համալիրների մասին:

14-րդ դարում Տաթեւի վանքը գիտամշակութային վերելք է ապրել: Այստեղ են հավաքվել ժամանակի աչքի ընկնող աստվածաբաններ, փիլիսոփաներ, աստղագետներ, տրամաբաններ, երաժիշտներ, նկարիչներ: Կրոնավորների թիվը գնալով մեծացել է՝ հասել մոտ 1000-ի: Վերակառուցվել է վանական կրթարանը, 895 թվականին հիմնված վարդապետարանը դարձել է համահայկական մշակութային կենտրոն, հիմք է դրվել նոր, բարձր տիպի դպրոցի՝ Տաթեւի համալսարանի: Վանքին կից 10-րդ դարում գործել է Տաթեւի մատենադարանը, որը համալսարանի գոյության տարիներին հարստացել է եւ գոյատեւել մինչեւ 1911-12 թվականները, իսկ ավերից ու ավարառություններից փրկված 140 ձեռագիր մատյաններ տեղափոխվել են Էջմիածին, ապա՝ Երեւանի Մատենադարան:

13-14-րդ դարերում Տաթեւի վանքի եպիսկոպոսությունն ուներ 677 հարկատու գյուղեր՝ իր թեմում գտնվող 14 գավառներում (Ծղուկ, Եվայլախ, Վայոց ձոր, Գեղարքունի, Սոթք, Աղահեճ, Հաբանդ, Բաղք, Քաշունիք, Կովսական, Արեւիք, Ջորք, Երնջակ, Ճահուկ), բազմաթիվ վանքեր: 14-րդ դարում Հովհան Որոտնեցին Տաթեւի վանքի գավթի վրա կառուցել է կամարակապ, երկհարկանի զանգակատուն: 1381-87 թվականներին Լենկթեմուրի՝ Սյունիք կատարած արշավանքի ժամանակ վանքը կողոպտվել է, հրկիզվել, կորցրել կալվածքների մեծ մասը: Տաթեւի վանքը վերստին բարգավաճել է ուշ միջնադարում՝ 17-18-րդ դարերում, երբ իշխանական ու հոգեւորական դասի հզորացումը խթանում է հայկական կարեւոր կենտրոնների բարգավաճումը: Ավելի ուշ ազատագրական պայքար է սկսվում Սյունիքում (1722-1730) եւ Արցախում (1724-1731): Եվ անառարկելի է, որ այդ պայքարը մտահղացվել ու կառավարվել է հենց Տաթեւի վանքում, նրա հոգեւորական դասի կողմից, որը նաեւ ցանկացած պահի դառնում էր ռազմական դաս:

Աբրահամ Աստապատեցին 18-րդ դարի երկրորդ քառորդին Տաթեւի վանքում դպրոց է բացել, որը գործել է մինչեւ 20-րդ դարը, համալիրի հյուսիսարեւելյան կողմում կառուցել 16 դասասենյակով դպրոցի շենք: Հովակիմ արքեպիսկոպոսը 1787 թվականին տաճարի հարավային մուտքի առջեւ կառուցել է Գրիգոր Տաթեւացու դամբարանը, հյուսիսային պարսպի բուրգերը, բնակելի սենյակներ, ձիթհանքի շենք եւ այլն:

Ս. Պողոս-Պետրոս տաճարը ճարտարապետական հորինվածքով արեւմուտքից արեւելք ձգված ուղղանկյուն դահլիճ է, արեւելքում աբսիդով եւ նրան հարող զույգ ավանդատներով: Արեւելյան ճակատը մասնատված է խոր խորշերով, որոնցից վերեւ տեղավորված են Աշոտ Սյունի գահերեց իշխանի եւ նրա կնոջ՝ իշխանուհի Շուշանի դիմաքանդակները: Նրանցից աջ եւ ձախ, խորշերի պսակների մեջ վիշապ օձերի, այլ ավանդական պահպանիչ էակների քանդակներ են: Տաճարի պատերը 930 թվականին ծածկվել են հարուստ որմնանկարներով, որոնցից այժմ քիչ բան է պահպանվել: Տաճարի գլխավոր աբսիդում պատկերված է եղել գահի վրա նստած Քրիստոսը, ավելի ցած՝ առաքյալներ եւ սրբեր: Արեւմտյան պատի վրա մնացել են ահեղ դատաստանի մեծ կոմպոզիցիայի մնացորդները, իսկ հյուսիսային պատին ծննդյան սյուժեի հետ առնչվող տեսարաններ: Այստեղ պահպանվել է 10-րդ դարի որմնանկարչական ամբողջական հարդարանքը, որը պատկերացում է տալիս վաղմիջնադարյան հայ եկեղեցական նկարազարդման համակարգի մասին: Պատկերներն արվել են ֆրեսկո տեխնիկայով, հայկական որմնանկարչությանը հատուկ 3-4 միլիմետր հաստության սվաղի վրա՝ տեղական բնական հանքաներկերով, մասնավորապես՝ լաջվարդով: Խորանի կոնքում պատկերված է եղել «Քրիստոսը Փառքի մեջ» տեսարանը: Կոր պատի վրա, երեք նախշերիզված շարքերով, կամարների ներքո ներկայացված են մարգարեները, առաքյալները եւ Հայ եկեղեցու հայրերը՝ սրածայր խույրերը գլխներին:

Տաթեւի վանական համալիրը եղել է ոչ միայն հոգեւոր, այլեւ կրթամշակութային խոշոր կենտրոն: Զաքարյան իշխանապետության տարիներին հիմնադրվել էր հայ իրականության մեջ առաջին բարձրագույն դպրոցը՝ Գլաձորի համալսարանը: Մինչ այդ գոյություն էր ունեցել Անիի վարդապետարանը: Գլաձորի սաները 14-րդ դարի վերջում տեղափոխվում են Տաթեւ, որտեղ հիմնում են նոր համալսարան: Այն գործել է 1373-1435 թվականներին ու մեծ համբավ ունեցել Հովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու ուսուցչապետության տարիներին:

/շարունակությունը՝ էջ 6-ում/

14.qxd 09/07/2025 17:13 Page 6

ՏԱԹԵՎԻ ՀԶՈՐԱԶՈՐ ՈՒ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՎԱՆՔԸ

/սկիզբը՝ էջ 5-ում/

Տաթեւի համալսարանը հովանավորել են Օրբելյան իշխանական տունը եւ Սյունյաց մետրոպոլիտությունը: Ունեցել է երեք լսարան՝ ուսումնարան սուրբ, ներքին եւ արտաքին գրոց, գրչության արվեստի, երաժշտության: Այստեղ դասավանդվել է փիլիսոփայություն, կրոն, հայոց լեզու եւ քերականություն, գրականություն, պատմություն, ճարտասանություն, գրչարվեստ, մանրանկարչություն եւ գեղանկար, բնագիտություն եւ աստղաբաշխություն, մաթեմատիկա, ճարտարապետություն, երաժշտություն եւ երգեցողություն, ուսուցչություն եւ հասարակական գիտություններ, այլ առարկաներ:

Համալսարանն ունեցել է հարուստ ձեռագրատուն-մատենադարան, որտեղ պահպանվել են 10 հազարից ավելի ձեռագիր գրքեր: Ուսումը, ինչպես եւ Գլաձորի համալսարանում, տեւել է 7-8 տարի:

Գրիգոր Տաթեւացին կատարելագործել է համալսարանի ծրագիրը, կազմել դասագրքեր, որոնք եղել են նաեւ քարոզության արվեստի, աստվածաբանության եւ Հայ եկեղեցու դավանության լավագույն ձեռնարկներ: Գրիգոր Տաթեւացու գործունեությունը նպաստել է Գրչության արվեստի զարգացմանը: Նա վարել է գրչության տեսական դասընթաց եւ անցկացրել գործնական պարապմունքներ: Նա պատրաստել է մոտ 60 գրիչ: Համալսարանի սաներից են Թովմա Մեծոփեցին, Առաքել Սյունեցին, Գրիգոր Արարատեցին, Սարգիս Սալնապատեցին, Բարսեղ Բաղիշեցին, Մատթեոս Ջուղայեցին, Հակոբ Անձղնապատեցին, Սիմեոն Եղվարդեցին, Մկրտիչ Նահապետենցը եւ այլ նշանավոր դեմքեր:

Տաթեւի համալսարանին կից գործել է մանրանկարչության դպրոցը, որտեղ նկարազարդում էին դասագրքեր եւ ստեղծում նորերը: Այն շարունակում էր Գլաձորի դպրոցի ավանդույթները եւ հասակակից էր Վասպուրականի ու Կիլիկյան Հայաստանի դպրոցներին:

Սուրբ Պողոս-Պետրոս տաճարի հարավային պատին կից, 1043 թվականին կառուցվել է կամարակապ սրահ, որը քանդվել է 1931 թվականի երկրաշարժից: 1087 թվականին համալիրի պաշտպանական համակարգի հյուսիսարեւմտյան անկյունում, մուտքի եւ դամբարանի ծածկերի վրա, իբրեւ երկրորդ հարկ կառուցվել է սուրբ Աստվածածին եկեղեցին: 1295 թվականին, երկրաշարժից կործանված սուրբ Գրիգոր եկեղեցու տեղում Սյունյաց մետրոպոլիտ, նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը մի եկեղեցի է կառուցել, դարձյալ սուրբ Գրիգոր անվամբ, որի ճարտարապետը, ենթադրաբար, եղել է Մոմիկը :



Ուշ միջնադարում մեծ տաճարի արեւմտյան կողմում կառուցվել է գավիթ, տանիքի վրա՝ զանգակատուն: Տաճարի հարավային մուտքի առջեւ 1787 թվականին կառուցվել է Գրիգոր Տաթեւացու դամբարանը, իսկ 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին՝ տաճարի արեւմտյան մուտքի առջեւ մի զանգակատուն:

Այս հիմնական կառույցներից զատ, բակի կենտրոնում, 904 թվականին կառուցվել է ճոճվող հուշասյունը կամ Գավազանը՝ միակ կառույցը, որը բազմաթիվ երկրաշարժներից պահպանվել է անխաթար: Այն ունի ութ մետր բարձրություն, որի ութանկյուն սյան գագաթին դրված է հայկական խաչ - խաչքար եւ նվիրված է Սուրբ Երրորդությանը: Ճոճվող հուշասյունը կառուցվել է լծակի վրա հիմնված հատուկ տեխնիկայով, որը թույլ է տալիս, որ սյունը ճոճվի ցնցումների ժամանակ եւ այնուհետ կրկին վերադառնա իր սկզբնական դիրքին: Սյունը նախագծվել է այնպես, որ ճոճվելու միջոցով ծառայի որպես տագնապի նախազգուշացման համակարգ՝ վանականներին զգուշացնելով զավթիչ բանակների մոտեցման վտանգի մասին:

14-րդ դարում հիմնական կառույցների հարավային, արեւմտյան եւ հյուսիսային կողմերում կառուցվել են պարիսպները, բնակելի, օժանդակ եւ տնտեսական մի շարք շենքեր: 18-րդ դարում շինարարական աշխատանքների արդյունք են առաջնորդարանը, վանականների խցերը, շտեմարանը, սեղանատունը, խոհանոցը, հացատունը, գինետունը, այլ կառույցներ:

Տաթեւի վանքի ձիթհանը կառուցել է Հովակիմ արքեպիսկոպոսը 18-րդ դարի վերջին: Այն բաղկացած է չորս արտադրասենյակից, որոնց թվում են գմբեթածածկ կալատունը՝ բովման վառարանով ու թաղածածկ մամլման բաժինը: Տաթեւի ձիթհանը Հայաստանի միջնադարյան նույնատիպ կառույցներից ամենալավ պահպանվածն է ու արժեքավորը: Ձիթհանից արեւելք, ձորալանջի եզրին, 17-րդ դարում կառուցված վանքի բաղնիքի՝ երեք մասից բաղկացած թաղածածկ շենքն է:



Որոտանի ձորում գտնվում է Տաթեւի անապատը, որն ուշ միջնադարի արժեքավոր համալիրներից է: Այն ռազմական նշանակություն է ունեցել 18-րդ դարում՝ Դավիթ Բեկի կազմակերպած ազատագրական պայքարի ժամանակ: Տաթեւի վանքի զանգակատան ձայնը լսվել է 50 կիլոմետր շառավղով:

Պարսպից դուրս՝ արեւմտյան կողմում, 2001 թվականին կանգնեցվել է Գարեգին Նժդեհի կիսանդրին՝ ի հիշատակ այն պատմական իրադարձության, որ Տաթեւը 1919–1921 թվականներին եղել է Լեռնահայաստանի կառավարության նստավայրը:

Տաթեւի վանքից արեւմուտք, Որոտանի վտակի վրա, դեպի Տանձատափ տանող ճանապարհին կանգուն է միաթռիչք, 7,2 մետր երկարության, գլանաձեւ թաղով կամուրջը, որը, ըստ արեւմտյան ճակատի արձանագրության, կառուցվել է 1672 թվականին: Գյուղի հարավային եզրին աղբյուրի շենքն է, որը կառուցել է Հովհաննես վարդապետը 1745 թվականին: Տաթեւ գյուղի կենտրոնական մասում կանգուն է սուրբ Սինաս եկեղեցին, որը կառուցել է Ներսես վարդապետը, 1646 թվականին:

Այսօր էլ Տաթեւը վեհորեն կանգնած է հայ ժողովրդի նենգ ու դարավոր ոսոխների, նորօրյա նվաճողների չար նպատակներին դեմ հանդիման՝ որպես հայկականության խոսուն վկա ու անպարտելի առասպելական հերոս: Նրա սրբազան շունչը մենք զգում ենք մեր սրտերում՝ բռնկվելով ոգեղեն հզոր ալիքով: Ու այդ ոգեւորությամբ էլ Տաթեւից ուղղություն ենք վերցնում դեպի Խուստուփ լեռան գագաթ, դեպի Սյունյաց արծիվների անառիկ բույն, դեպի Գարեգին Նժդեհի սրբացած շիրիմ:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿՅԱՆՔ Է ՃԱՆԱՊԱՐՀԵԼ ԻՐ 28-ՐԴ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

ՀՀ Սահմանադրության օրվա տոնակատարության օրը Գավառի պետական համալսարանում կայացել է 2024-2025 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությունը:

Համալսարանը, իր առաքելությանը հավատարիմ, ճանապարհել է շրջանավարտների 28-րդ սերնդին:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ողջունել եւ շնորհավորել է բակալավրիատի եւ մագիստրատուրայի շրջանավարտներին, շնորհակալություն հայտնել նրանց ծնողներին, ընտանիքների անդամներին, ԳՊՀ բոլոր բարերարներին, համալսարանի ողջ աշխատակազմին եւ նշել, որ եւս 188 երիտասարդ մասնագետ համալրել են համալսարանի ութ հազարից ավելի շրջանավարտների բանակը, ովքեր իրենց ներդրումն են ունենում մեր հասարակության եւ պետության զարգացման գործում:

Շրջանավարտներին դիպլոմներ են շնորհել եւ բարեմաղթանքներ հղել ԳՊՀ պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ֆակուլտետների դեկաններ Թաթուլ Ասոյանը, Մարտին Ավագյանը, ամբիոնների վարիչներ Համլետ Ղաջոյանը, Սամվել Ամիրխանյանը, Հակոբ Ղուլոյանը, Գայանե Միրիբյանը, Վարազդատ Ավետիսյանը, «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Գեղամ Կարոյանը:

Շրջանավարտներին իրենց գեղեցիկ կատարումներով շնորհավորել են Գավառի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի երգի ուսուցիչ, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտ Գրիգոր Բալագոզյանը, նույն դպրոցի դաշնամուրային բաժնի շրջանավարտ Սամվել Գասպարյանը, Գավառի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոցի սան Սամվել Խաչատրյանը, ինչպես նաեւ Մարտունու Ներքին Գետաշեն համայնքի «Անի» պարային համույթի շնորհալի սաները, որոնց գեղարվեստական ղեկավարն է ԳՊՀ հեռակա բաժնի 2025 թվականի շրջանավարտ Անի Իսոյանը:

Դիպլոմների շնորհումն ուղեկցվել է ոգեշնչող ուղերձներով եւ շրջանավարտների հաջողության հուզիչ պատմություններով:

«Գեղամա աշխարհ»

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍԵՎԱՆԻ ԿՈՂԱԿԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ

Սեւանա լճի էկոհամակարգի կենսաբազմազանության պահպանման շրջանակում Շրջակա միջավայրի նախարարության եւ «Սեւանի իշխանի պաշարների վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման հիմնադրամի» համագործակցությամբ մեկնարկել է Սեւանի կողակի արհեստական վերարտադրության փորձնական փուլը:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզի կարճաղբյուր գյուղում գործող Սեւանի իշխանի մանրածկան գործարանի տնօրեն Տիգրան Վարդանյանը, գործարանի ինկուբացիոն տեղամասում արդեն մոնտաժվել է կողակի վերարտադրման համար նախատեսված ժամանակակից ինկուբատոր, որը ձեռք է բերվել տարեսկզբին:

Ներկայում իրականացվում են ծնողական կազմի տեսակավորման աշխատանքներ՝ առանձնացնելով վերարտադրության պատրաստ առանձնյակներին:

-Այժմ Սեւանի կողակի արհեստական վերարտադրության մեր գործողությունները գտնվում են փորձնական փուլում: Այն պահանջում է որոշակի ջանքեր ու ժամանակ, մինչեւ որ կկարողանանք Սեւանա լիճ բաց թողնելու նպատակով արհեստական եղանակով ստանալ մանրածկան առաջին խմբաքանակները: Մեր հաշվարկներով՝ դա տեղի կունենա 2027 թվականի ընթացքում, այն հաշվով, որ այդ ժամանակահատվածում արդեն մեր ջարավազաններում Սեւանի կողակի մանրածկան քաշը կկարողանանք հասցնել մինչեւ 3-4 գրամի, որպեսզի նրանք կենսունակ լինեն հետագա աճի ու զարգացման համար: Այս պահի դրությամբ արդեն ունենք շուրջ 2 հազար մայրական կազմի Սեւանի կողակ, սակայն շարունակում ենք համալրումները: Սեւանի կողակի արհեստական վերարտադրության ապահովման պարագայում համարժեք ու անհրաժեշտ քայլեր կձեռնարկվեն նաեւ բնական վերարտադրության համար, որի դեպքում հարկ կլինի ապահովել Սեւան թափվող մի շարք գետերի մաքրությունն ու մշտահոսությունը,- ներկայացրեց Տիգրան Վարդանյանը:

14.qxd 09/07/2025 17:13 Page 7

ՎԱՐԴԵՆԻՍՅԻ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՐԴԻ ԳԱՐԻԿ ԲԱԴԵՅԱՆԸ

-Սովորում էի Վարդենիսի ինստիտուտում: Գարիկն ինձ տեսել էր, հավանել: Երկու տարի շփվելուց հետո 2015 թվականի հոկտեմբերին նշանադրվեցինք: Նույն թվականի նոյեմբերի 30-ին մեր հարսանիքն էր,- «Փաստ» օրաթերթի հետ զրույցում ասում է Շուշանը՝ Գարիկի կինը:

Ամուսնու մասին խոսելիս Շուշանը շեշտում է նրա հավատարմությունը, չափից դուրս անկեղծությունը բոլորի հետ:

-Չէր սիրում մարդու հետեւից խոսել, բամբասել: Միշտ ասում էր՝ մարդուն բան ունես ասելու, հենց իրեն ասա, որ նա էլ իր սխալը հասկանա: Նվիրվում էր մարդուն իր ամբողջ սրտով ու հոգով՝ թե՛ ընկերներին, թե՛ ընտանիքին, թե՛ հարազատներին: Եթե գիշերվա կեսին էլ իրեն զանգահարեին ու ասեին, որ ինչ-որ խնդիր ունեն, նա ոչինչ հաշվի չէր առնի, միանգամից կշտապեր օգնության: Շրջապատում իր կարծիքը լսում էին, հաշվի առնում, նա երբեք ոչ մեկին վատ խորհուրդ չէր տալիս, իր հնարավորության սահմաններում բոլորին օգնում էր: Հոգատար, հավատարիմ ամուսին էր: Իր հետ յուրաքանչյուր վայրկյանը սիրո ու ջերմության մեջ եմ ապրել: Գարիկը փոքր էր եղել, երբ իր հայրիկը մահացել էր, եւ նա կարծես իր ներսում կուտակված ողջ ջերմությունը փոխանցում էր մեր երեխաներին: Ժամերով կարող էր խաղալ երեխաների հետ: Նրանք գիտեին՝ պապան տուն եկավ, հիմա հաց կուտի եւ իրենց հետ կխաղա: Եվ նա անընդհատ երեխաների հետ ժամանակ էր անցկացնում: Երբեք չէր բղավում, բարկանում նրանց վրա, միշտ ասում էր՝ ես երեխաների հետ խաղալով, շփվելով հանգստանում եմ: Երեխաները մինչեւ հիմա էլ այդ հիշողություններով են ապրում, - շարունակում է Շուշանը:

Շուշանը եւ Գարիկը երեք երեխա ունեն՝ երկու աղջիկ եւ տղա:

-Երազում էր, որ մեր երրորդ երեխան տղա լինի, ինքն էլ նրան Գոռիկ անվանակոչի. «Որ մեր անունները նման լինեն՝ Գարիկ ու Գոռիկ»: Բայց հետո մտափոխվել էր՝ ուզում եմ աղջիկ ունենալ: Եվ երբ իմացավ, որ աղջիկ ենք ունենալու, շատ ուրախացավ: Միանգամից որոշեց մեր աղջկա անունը՝ Արեւ. «Իր անունը կդնեմ Արեւ, ու ինքն իմ արեւը կդառնա»: Բայց, ցավոք, իր Արեւի հետ շփումը Գարիկն ընդամենը երկու ամիս վայելեց:

Գարիկը ծնունդով Վարդենիսից է: Դպրոցն ավարտելուց հետո սովորել է Վիկտոր Համբարձումյանի անվան պետական ինստիտուտում, այնուհետեւ զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության: Զորացրվելուց հետո մի քանի տարի աշխատել է Վարդենիսի երկրորդ բանակային կորպուսում, գործուղումներով հաճախ եղել է Արցախի եւ Հայաստանի տարբեր անկյուններում: Շուշանն ասում էր՝ պետք է անձամբ ստուգեր թնդանոթները, որ հետո սկսվեին զորավարժությունները: Իրեն ճանաչում էին որպես «ռեմոռտի Գարո»:

Կնոջ խոսքով, դեռ տարիներ առաջ իրենց տարածաշրջանում մրցույթ կազմակերպվեց՝ հասկանալու համար, թե ով կարող է հրանոթի լավ ղեկավար դառնալ:

-Արցախի եւ Հայաստանի մասշտաբով Գարիկն առաջին տեղը զբաղեցրեց: Նա անցավ Քառօրյա եւ 44-օրյա պատերազմների միջով: 44-օրյա պատերազմից հետո հատկապես ձգտում էր դիրքերում ծառայել: Միշտ ասում էր՝ յուրաքանչյուր հայի պարտքը պետք է լինի դիրքում ծառայելը, մեր ժամկետային զինծառայողների կողքին լինելը: Բայց իրեն չէին ցանկանում աշխատանքից ազատել, որովհետեւ իր նման մասնագետի կարիքը միշտ կար: Շատ ծանր տարավ Քարվաճառի հանձնումը: Իմ ամուսնու աչքերում արցունքներ չեմ տեսել, բայց Քարվաճառի հանձնման լուրը լսելու ժամանակ նստած տեղը լուռ արտասվեց: Չէր կարողանում մոռանալ այն տղաներին, որոնք պայքարել էին, ցավոք, նաեւ զոհվել այդ հողի համար: Ասում էր՝ այդ հողերը չպետք է տային: Դրանից հետո նա վերջնականապես որոշեց, որ պետք է ծառայի դիրքերում: Իրեն միշտ խնդրել եմ տանը մոտ ծառայել, երեխաները շատ էին կարոտում, հատկապես տղաս: Նա այդ ժամանակ չորս տարեկան էր, մատների վրա հաշվում էր, թե պապան քանի օրից է գալուե: Գարիկը մշտապես մերժել է կնոջ այդ խնդրանքը՝ ես պետք է դիրքերում մնամ՝ իմ ընտանիքի կողքին: Ասում էր՝ առաջինը տղաներն են, որովհետեւ եթե իրենք չլինեն, Վարդենիսում ոչ մեկ չի լինի: Երբ դիրքերում էր, անհամբեր սպասում էր տուն վերադառնալուն, կարոտում էր երեխաներին, իսկ երբ տանն էր լինում, սպասում էր, թե երբ է դիրքեր բարձրանալու: Նեղանում էի իրենից, բայց նա ասում էր՝ երեխեքն այնտեղ կանգնած են, առաջնային տունը դա է:

Գարիկը եւս մեկ պատերազմ պետք է տեսներ, դրա անմիջական մասնակիցը դառնար: 2022 թվականի սեպտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը թշնամին հարձակվեց Հայաստանի սահմանների վրա մի քանի ուղղությամբ: Թիրախում էր նաեւ Գեղարքունիքի մարզը:

-Սեպտեմբերի 12-ին իրեն զանգեցի, չգիտեմ՝ ինչու, անկախ ինձանից, իրեն հարցրեցի՝ բայց գալու ես, չէ՞, տուն: Օգոստոսին այդ դիրքերում կրկին անհանգիստ էր եղել, Գարիկը եւ նրա ծառայակից ընկերները համարյա մեկ ամիս տուն չեկան: Միշտ ներսումս Գարիկին կորցնելու վախ կար, որովհետեւ գիտեի՝ որքան վտանգավոր տեղ կա, Գարիկը կգնա: 44-օրյա պատերազմի իր զինակից ընկերներն էին պատմում՝ Գարիկը մեզ թողնում ու գնում էր: Մի օր հետեւից գնացել եմ՝ հասկանալու համար, թե ուր է գնում: Տեսել եմ՝ թաքուն մտնում է վտանգավոր հատվածները եւ հրանոթներն է կարգի բերում: Իմ հարցին պատասխանեց՝ անպայման կգամ, բայց երեխեքի նկարներն ուղարկիր, հատկապես Արեւինը: Հետո խնդրեց, որ հեռախոսը մեր մեծ աղջկան փոխանցեմ, հետը խոսի: Մի երկու ժամ Նարեի հետ խոսեց: Քնեցինք՝ առանց որեւէ բան կասկածելու: Այդ ժամանակ եղբայրս էլ էր զինվորական աշխատում, գիշերվա կեսին զանգահարեց՝ երեխեքի հետ իջեք առաջին հարկ՝ «Հանկարծ չվախենաս, բայց ոնց որ կռիվ է սկսվում» ասելով: Միանգամից զանգեցի Գարիկին, բայց նա չպատասխանեց իմ զանգերին: Եղբորս հետ էր խոսել՝ երեխեքին իջեցրու նկուղ: Վահանը հարցրել էր՝ Գա՛ր, ամեն ինչ նորմա՞լ է քո մոտ: «Հա, սաղ տոչնի ա»,-հնչել էր պատասխանը: Վերջին անգամ էլ եղբորս հետ է խոսել՝ «Վահա՛ն, երեխեքիս քեզ եմ տալիս, նրանց տիրություն կանես: Հետո հեռախոսն անջատել է:

Տղաները ժամեր շարունակ մարտի մեջ են մտել թշնամու մեծաթիվ ուժերի դեմ: Առանց օգնություն ստանալու՝ հետ են շպրտել թշնամու մեծաթիվ ուժերը:

-Իր հրամանատարական կազմը մեզ ասաց՝ վերջին՝ նահանջի հրամանին Գարիկը չի ենթարկվել: Երբ ասել են, որ թշնամին շրջապատում է դիրքը, Գարիկն արձագանքել է. «Փախչող տղա չկա, թույլ չեմ տա, որ թուրքն իր ոտքը դնի իմ հողի մեջ»: Դիրքում բոլոր տղաները զոհվել են: Գարիկը, լինելով ոտքից վիրավոր, միայնակ տարբեր հատվածներից կրակ է բացել թշնամու ուղղությամբ: Միայն 300 արկ բաց է թողնվել Գարիկենց դիրքի ուղղությամբ: Թշնամին մտածել է, որ այդտեղ մեծ թվով ուժեր են կենտրոնացած: Առավոտյան ութից տասը պակաս Գարիկը վերջին անգամ կապ է հաստատել հրամանատարական կազմի հետ:

Գարիկն անմահացել է սեպտեմբերի 13-ին Արտանիշում:

-Հույսներս չէինք կտրում, որ ողջ է: Մեզ ասում էին, որ Գարիկն անտառում է, շուտով դուրս կգա, այդ հույսով էինք ապրում, չէինք ուզում հավատալ, որ նա չկա: Բայց զոհված տղաներին քիչ-քիչ գտնում էին: Գարիկին գտել ենք զոհվելուց 50 օր անց:

Շուշանն ասում է՝ մեծագույն ցավ է, որ ընտանիքներից շատերը չկարողացան անգամ վերջին հրաժեշտ տալ իրենց որդիներին. գրեթե բոլորին տուն բերեցին փակ դագաղներով:

Ապրելու ուժի մասին:

-Իմ լույսն էլ, հույսն էլ երեխաներս են, իր Արեւը, որին նա ինձ տվեց, մեր անթիվ հիշողությունները, իր պատիվը, որը միշտ պետք է բարձր պահեմ ու իմ երեխաներին այնպես դաստիարակեմ, ինչպես ինքն էր ցանկանում՝ ամենակարեւորը՝ որպես լավ մարդ: Ամեն ինչ անելիս միշտ ասում էր՝ եթե Աստված կամենա, ամեն ինչ լավ կլինի, աստվածավախ մարդ էր եւ ուզում էր, որ մեր երեխաներն էլ այդպիսին լինեն: Երեխաների հետ միշտ խոսում ենք հայրիկի մասին: Նրանց ասում եմ՝ հպարտացեք, որ այսպիսի հայրիկ ունեք: Իսկ ես էլ Աստծուն փառք եմ տալիս, որ հենց իր նման հոգատար, իմ ամեն օրը սիրով եւ երջանկությամբ լցրած ամուսին եմ ունեցել:

Լեյտենանտ Գարիկ Բադեյանը ծառայության ընթացքում պարգեւատրվել է բազմաթիվ պատվոգրերով ու մեդալներով, հետմահու՝ «Արիություն» մեդալով: Հուղարկավորված է Վարդենիսի գերեզմանատանը:

ԼՈՒՍԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ
«Փաստ» օրաթերթ

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՄԱՅՐՈՒՂՈՒՅ ՋԻԼ ԳՅՈՒՂ ՄՏՆՈՂ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ պետբյուջեի միջոցներով մեկնարկել եւ ընթանում են Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլ գյուղ մտնող կենտրոնական ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Ջիլի կենտրոնական ճանապարհի հիմնանորոգման ծրագրի նախահաշվային արժեքը կազմել է 593 միլիոն 200 հազար դրամ, պայմանագրային արժեքը՝ 398 միլիոն 880 հազար դրամ:

Ծրագրով նախատեսված է ճանապարհի երթեւեկելի մասի հիմքի, երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի եւ կողնակների տեղադրում, ջրահեռացման համակարգի եւ սալիկապատ մայթերի կառուցում՝ շուրջ 1200 քառակուսի մետր մակերեսով, կամրջի ամրացում: Հիմնանորգվող ճանապարհի երկարությունը կազմում է 3100 մետր, մակերեսը՝ 21 հազար 400 քառակուսի մետր: Հիմնանորոգվող ճանապարհը Սեւան-Շողակաթ-Վարդենիս մայրուղուց հասնում է մինչեւ Ջիլի նորակառույց դպրոց, որը եւս կառուցվել է ՀՀ պետբյուջեից տրամադրված միջոցների հաշվին, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում եւ իր դռներն աշակերտների առջեւ բացել այս տարվա փետրվարից: Հիմնանորոգվող ճանապարհի շուրջ 1,6 կիլոմետրն անցնում է բնակավայրի ներսով:

Հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո կիրականացվեն նաեւ ճանապարհի կահավորման ու գծանշման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔՈՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

Ճանապարհը նախատեսվում է շահագործման հանձնել այս տարվա ընթացքում:

ԵՐԱՆՈՍՈՒՄ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ ՁՈՐՍ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ Ա. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում արդեն ավարտական փուլում են գտնվում 5-րդ, 9-րդ, 21-րդ, 22-րդ փողոցների հիմնանորոգման աշխատաքները, որոնք իրականացվում են ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրեց Երանոսի վարչական ղեկավար Սաշա Բավեյանը, շինարարական աշխատաքների մեկնարկը տրվել է 2025 թվականի մայիսից: Ծրագրով նախատեսված է ճանապարհների երթեւեկելի մասերի ասֆալտապատում եւ ջրահեռացման համակարգերի կառուցում:

2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ արդեն ամբողջությամբ ասֆալտապատված են 21, 22, 5-րդ փողոցները, իսկ 9-րդ փողոցում աշխատանքները մոտենում են ավարտին: Փողոցներն ասֆալտապատվել են շուրջ 1920 մետր երկարությամբ եւ 9240 քառակուսի մետր մակերեսով:

Երանոսի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 116 միլիոն 652 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

14.qxd 09/07/2025 17:13 Page 8

Ո՞Վ ԷՐ ԱՇՈՒՂ ՖԱՐՀԱՏԸ



Մեջտեղ նստողը աշուղ Ֆարհատն է

Կույր էր, սեւ ակնոց կը կրեր միշտ:

Շիրակի ժողովուրդի սիրելի երգիչն էր:

Ամառ ու ձմեռ աշուղ Ֆարհատը Շիրակի դաշտը երկայնությամբ եւ լայնությամբ կը չափչփեր ոտքով՝բռնած երիտասարդի մը թեւեն, ուր կը հանգչեր իր ջութակը:

Գյուղ չկար, որ այցելած չըլլար «Ուսքա» Ֆարհատը. մեծեն փոքր կը ճանչային ընտանի դարձած այդ աշուղին:

Երբ գյուղ մտնար, կը շրջապատեին զինքը ու կառաջնորդեին խոնարհ շինականի մը տուն, ուր պուխերիկին քովիկը ծալապատիկ նստած՝ իր պառաված խարխուլ ջութակը ձախ ծունկին հենարան դարձուցած՝ նախ նախերգանք մը հերոսական. ապա աղեղովը կը զարներ լարերուն ու կերգեր: Լարերու ձայնը խառնիճաղանջ կը հնչեր, ի՞նչ հոգ. իր երգն էր, որ կը ներդաշնակեր զայն:

Կերգեր Ֆարհատը՝ իր հոգին դնելով եղանակներու մէջ, կերգեր խանդավառ ու մոլեգին՝մարգարեի մը հավատով: Ու երգին մեջ տողեր կային, ուր աշուղ Ֆարհատի ձայնը ավելի ուժգին կը հնչեր առանձին շեշտով մը:

Երբեմն կատակով հետը կիյնայի.

-Ֆարհատ, ինչու՞ երբեմն անտեղի կը պոռաս երգածդ ատեն:

-Անտեղի չէ, սիրելիս: Ատի անոր համար է, որ դդում գլուխ մեր ժողովուրդի հոգին վառեմ ու սրտին մեջ տեղավորեմ ուզածս...

Աշուղ Ֆարհատը անվերջանալի նյութ ուներ՝ պատմելու ու երգելու:

-Իմ երգն ու պատմությունը ձեզ համար է, իսկ դուք իշու ականջի մեջ կը քնանաք...

Ֆարհատի ջութակը ավելի աշխուժ կը հնչեր,երբ կերգեր մանավանդ իր հորինած երգերը:

«Ոսկեզօծ պաշլըղներով լազի շորեր թանկագին,
Գնում էին դեպի Սասուն՝ օգնելու Անդրանիկին...»:
Կամ՝
«Իսլամներու գոռ վաշտերը ահագին....»:
«Սուլթանի գահը սարսռեցավ Սերոբ փաշի ռումբերեն...»:

Բազմաթիվ էին անոր հեղինակած հեղափոխական եւ ազգային երգերը: Երգեր ուներ Սերոբին,Գեւորգ Չավուշին, Խանասորին,Պանք Օթոմանի նվիրված, եղանակներն ալ ինքը կը հարմարցներ:

-Ես խռըֆած սերունդի համար չէ, որ կերգեմ,կըսեր, անոնց «խաֆա»-ները Մասիսի փութ քար են դարձեր:

Աղքատ էր Ֆարհատը. նյութական նվեր ալ ստանալու սովորություն չուներ, վարձկան չէր: Իր շրջագայության ատեն գյուղացիի պատառ մը հացով կը գոհանար: Քաղաք եղած ատեն հայկական սրճարաններ կերթար երբեմն, հարսանիքներու եւ մանավանդ հեղափոխական երեկույթներու, ուր փոր մը հաց ունենալը դժվար չէր: Այսպես տերվիշի մը պէս կապրեր կույր այդ աշուղը:

Հաճախ կուգար քովս: Տաք թեյի մը շուրջ կը սիրեր իր գաղափարները հայտնել աշխարհի չարն ու բարիի մասին:

...Ալեքսանդրապոլը 1897-1907 թիվերուն հեղափոխական մթնոլորտի, գործի եւ շարժումներու հնոց մըն էր:

Հոն կուգային ու հոնկէ կանցնեին գործիչներ, շրջիկներ եւ հայդուկային խմբեր՝դեպի երկիր երթալու կամ անկե վերադարձին: Աշուղ Ֆարհատը ներկա էր ամեն տեղ ընդունելություններուն եւ երեկույթներուն: Առանց անոր անգամ մը տեսնելու հեղափոխական գործիչները, խմբապետները չէին հեռանար քաղաքեն: Ստույգ մահվան դիմող այդ աներկյուղ եւ հանդուգն կորյունները մեկ-մեկ կուռքեր էին անոր համար:

«Ուսքա» Ֆարհատը օր մը ծրար մը բերավ խորհրդավոր ժպիտով եւ հանդիսավոր շարժումով դրավ սեղանին վրա:

Գրամեքենա մըն էր, զոր ինք էր հնարած: Կոպիտ եւ նախնական գործիք մը, որ սակայն կրնար գրել սեղմելով ուռուցիկ գիրերով ստեղնաշարի վրա:

Ինքը շատ խանդավառված էր իր գյուտով:

Վաղոյի պատվալը կը ժողովվեինք հաճախ՝ չանաղ ուտելու: Հոն կուգային երբեմն Ավետիք Իսահակյանը, Յակոբ Խաչվանքյանը,Արամայիսը,Գրիգոր Վեհապետյանը,Մարտիրոսը: Ֆարհատը շատ կը սիրեր մեր այդ շրջանակը, կը շաղակրատեր եւ ախորժով կը լսեր:

Ավետիքի սրամիտ եւ երբեմն վրան բաց պատմությունները, կամ նոր լուրեր կը լսեինք սահման անցած գործիչներու կամ խումբերու մասին:

Աշուղ Ֆարհատը կը հետաքրքրվեր մանավանդ շոգեքարշ մեքենաներով: Անգամ մը խնդրեց, որ զինքը կայարան տանիմ:

Ֆարհատը, երկու թեւերը բացած, ձեռքերը լարած սկսավ շոշափել անիվներեն սկսած դեպի կաթսաները: Երբ կը վերադառնայինք, Ֆարհատը ինքն իրեն կը խոսեր ու կը քալեր.

-Հը, Ֆարհատ, ի՞նչ տպավորություն ստացար:

-Ի՞նչ ասեմ, պալամ, մարդ ասած արարածի պզտիկ գլխուն մեջ ինչքան հնարք կա, Աստված իմ, ինչպե՞ս է, որ աստված մարդիկ բոլորն ալ գլուխներով է ստեղծեր, բայց խնդիրը մեջինն է. մեկին դատարկ տակառ, մյուսն աղբ, երրորդին փթած կարտոֆիլ. ափսոս, որ մարդուն սիրտը փոքր է...

Չեմ գիտեր,երկար ապրեցա՞վ արդյոք մեր Ֆարհատը:Ու՞ր եւ ինչպէ՞ս մեռավ, ոչինչ չգիտեմ: Վերջին անգամ զինքը Ալեքսանդրապոլ տեսա, այն ատեն, երբ ես ալ Երկիր կերթայի: Երկար իր գրկին մեջ պահեց ինծի: Իր կույր աչքերեն արցունքի կաթիկները դեմքես վար կը սահեին:

-Երթաս բարով, ազիզ ախպերս,- կրցավ ըսել միայն:

ԿՈՄՍ /Վահան Փափազյան/

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑԸ



Արդեն երկու շաբաթ է, ինչ ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են Գավառ քաղաքի Պետրովի փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Պետրովի փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 229 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է Պետրովի փողոցի երթեւեկելի մասի ասֆալտապատում՝ 1231 մետր երկարությամբ եւ 8538 քառակուսի մետր մակերեսով, մայթերի սալիկապատում՝ 2119 քառակուսի մետր մակերեսով, 1374 գծամետր երկարությամբ մայթերի բազալտե եզրաքարերի, 320 գծամետր երկարության ջրահեռացման վաքերի տեղադրում, 325 գծամետր երկարության ջրահեռացման ներքին ցանցի եւ 156 գծամետր երկարության գաբիոնային հենապատի կառուցում:

Այս պահին ընթանում են ջրահեռացման վաքերի եւ մայթերի եզրաքարերի տեղադրման աշխատանքներ: Կատարվել է նաեւ ճանապարհի երթեւեկելի մասի հին ծածկի հեռացում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Շինարարությունը նախատեսված է ավարտել այս տարվա ընթացքում:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՆՁԱԿՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գանձակ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են ոռոգման ջրատարի կառուցման աշխատանքները:

Գանձակի ոռոգման ջրատարի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 25 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է առագման ջրատարի կառուցում՝ 2 կիլոմետր երկարությամբ, մետաղական խողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի մայիսից եւ կավարտվեն այս տարվա ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում Գանձակում ոռոգելի կդառնա 250 հեկտար տնամերձ հողամաս: Ծրագրից կօգվեն շուրջ 200 տնտեսություն:

Ալվարդ Մանուկյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է ԶՈԼԱՔԱՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է 5-րդ փողոցը:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Զոլաքարի 5-րդ փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 35 միլիոն 175 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Զոլաքար գյուղի 5-րդ փողոցի ասֆալտապատում՝ 810 մետր երիարությամբ եւ 3618 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հունիսի 20-ից եւ արդեն մոտենում են ավարտին:

Շինարարությունն իրականացրել է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

ԾԱՂԿԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Արդեն շուրջ մեկ ամիս է, ինչ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծաղկաշեն գյուղում մեկնարկել եւ ընթացքի մեջ են գտնվում բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման աշխատանքները: Շենքը կառուցվում է Ծաղկաշենի նախկին գյուղապետարանի շենքի տարածքում:

Շինությունը լինելու է վարչական ղեկավարի նստավայր, ինչպես նաեւ ծառայելու է որպես երեխաների եւ երիտասարդների ժամանցի կազմակերպման համար նախատեսված տարածք:

Բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման ծրագրի արժեքը կազմում է 200 միլիոն դրամ, որը հատկացվում է Գավառ համայնքի բյուջեի միջոցներից:

Արդեն ավարտվել են հին շենքի քանդման աշխատանքները, ընթանում է նոր շենքի հիմքերի կառուցումը:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 10. 07. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: